Հայտարարություն Արցախի դեմ Ադրբեջանի հարձակման վերաբերյալ

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի բռնապետական ռեժիմը ծանր հրետանու, տանկերի և հրթիռների գործադրմամբ նախաձեռնեց լայնածավալ հարձակում Արցախի (Լեռնային Ղարաբաղի) շփման գծի ողջ երկայնքով:

Ռմբակոծվում են Արցախի քաղաքներն ու գյուղերը, այդ թվում Ստեփանակերտը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմանը Վարդենիս քաղաքի ուղղությամբ: Ադրբեջանը հստակ թիրախավորում է քաղաքացիական բնակչությանը՝ կոպտորեն խախտելով միջազգային մարդասիրական իրավունքը և բացարձակ անտեսելով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հրադադարի կոչը՝ պայմանավորված Կովիդ-19 համավարակով:

Արցախում (Լեռնային Ղարաբաղում) զինծառայողների և քաղաքացիական անձանց շրջանում արդեն հարյուրից ավելի վիրավոր և տասնյակ զոհեր կա, այդ թվում առնվազն մեկ երեխա:

Այս հարձակումն աննախադեպ է իր ծավալով և ռազմական տեխնիկայի ներգրավման տեսանկյունից: Կան հստակ ապացույցներ, որ գործողություններն իրականացվում են Թուրքիայի ռեժիմի բացահայտ աջակցությամբ:

Մենք վստահ ենք, որ եթե միջազգային հանրությունը ժամանակին և պատշաճ կերպով չարձագանքի, ռազմական գործողությունները կարող են ընդլայնվել տարածաշրջանում հակամարտության գոտուց այն կողմ, ինչը կհանգեցնի հումանիտար ճգնաժամի, որն ավելի կսրվի կորոնավիրուսի համավարակի բռնկումների հետ կապված իրավիճակի պատճառով:

Մենք հաստատակամ ենք աջակցելու բոլոր ջանքերին՝ ուղղված տարածաշրջանում մարդու իրավունքների, խաղաղության և անվտանգության պահպանման դեմ ուղղված բոլոր մարտահրավերների դիմագրավմանը:

Հայաստանի քաղաքացիական հասարակությունը խստորեն դատապարտում է Ադրբեջանի ռեժիմի սանձազերծած ագրեսիան և դիմում է միջազգային հանրությանը, միջազգային կազմակերպություններին՝ ՄԱԿ-ին, Եվրախորհրդին, Եվրամիությանը, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին՝ շտապ և արդյունավետ միջոցներ ձեռնարկել Ադրբեջանի ռեժիմի ագրեսիան դադարեցնելու և հակամարտության խաղաղ լուծման համար ճանապարհ գտնելու ուղղությամբ բանակցությունները վերսկսելու համար:

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

Իրազեկ քաղաքացիների միավորում

Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն

Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ

Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան

«Երիտասարդական ավանգարդ» ՀԿ

«Սինեմարթ»  ԵՀԿ

Հանուն հավասար իրավունքների ՀԿ

Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն ՀԿ

ՀԱՅ ՁՄԵՌ ՊԱՊ բարեգործական հիմնադրամ

Փինք իրավապաշտպան ՀԿ

Հելսինկյան Ասոցիացիա իրավապաշտպան ՀԿ

«Վելես» իրավապաշտպան ՀԿ

Կանանց իրավունքների տուն

Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ

Հանրային լրագրության ակումբ

Միջազգային և անվտանգության հարցերի հայկական ինստիտուտ (ՄԱՀՀԻ)

Հայ առաջադեմ երիտասարդություն ՀԿ

Նոր Սերունդ Մարդասիրական ՀԿ

Խաղաղության երկխոսություն

Քալրֆուլ Հաուս սոցիալ-մշակութային և իրավապաշտպան ՀԿ

Հայկական երիտասարդական լիգա ՀԿ

«Իրավունքի ուժ» իրավապաշտպան հկ

«Տաթևիկ» ՀԿ

Սպիտակի Հելսինկյան խումբ իրավապաշտպան ՀԿ

Կանանց աջակցման կենտրոն ՀԿ

Երիտասարդ Տավուշ ՀԿ

Երեխայի և ընտանիքի զարգացման Կենտրոն բարեգործական ՀԿ

Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա

«Կանանց հզորացման ռեսուրս կենտրոն» ՀԿ

Մարտունու կանանց համայնքային խորհուրդ հկ

Սպառողների աջակցման կենտրոն ՀԿ

Տարածաշրջանային մոնիտորինգային և գնահատման կենտրոն ՀԿ

ՕքսԵՋեն հիմնադրամ

" Սոսե Կանանց Հիմնահարցեր" ՀԿ

Շամս մարդասիրական ՀԿ

Մարտունու համայնքային զարգացման կենտրոն ՀԿ

«Դու մենակ չես» կանանց աջակցման ՀԿ

«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ

Ռեստարտ

Կանանց Ռեսուրսային Կենտրոն

«Դալմա-Սոնա» Հիմնադրամ

Տնտեսական իրավունքի կենտրոն ՀԿ

Առաքելություն Օգնության և Զարգացման ՀԿ

Ճանապարհային երթևեկության անվտանգություն և վերահսկողություն

Անվտանգ երթևեկություն ՀԿ

Թումանյան փաստաբանական գրասենյակ

«Խազեր» Էկոլոգամշակութային ՀԿ

«Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ

Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն

«Հաշմանդամություն և ներառական զարգացում» ՀԿ

«Փոքրիկ Իշխան» կրթահամալիր

Իրավունքի զարգացման կենտրոն ՀԿ

Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամ

«Ոսկե ծիրան» կինոյի զարգացման հիմնադրամ

Քայլ առաջ ՀԿ

«Հանրային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն» ՀԿ

Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության կոալիցիա

Սոցիալական արդարություն ՀԿ

Սորս հիմնադրամ

«Ուղի դեպի» մշակութային բարեգործական ՀԿ

Սպառողների խորհրդատվության կենտրոն ՀԿ

Առողջապահության քաղաքականության և նորարարության կենտրոն ՀԿ

Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ ՀԿ

«Բազմազանություն» սոցիալ-մշակութային, մարդասիրական ՀԿ

Կանանց Ներուժի Զարգացման Կենտրոն ՀԿ

Ունիսոն ՀԿ

Վարորդի ընկեր

«ԼԱՄՊ» հիմնադրամ

«Արծվաբույն Զեյթուն» հայրենակցական միություն

ԷկոԼուր տեղեկատվական ՀԿ

«Սի-Փի-Այ» մարդու իրավունքների հայկական կենտրոն

Իրավունքի Եվրոպա միավորում

«Մենք Կարող ենք» մտավոր խնդիրներ ունեցող երիտասարդների, երեխաների և նրանց ընտանիքի անդամների շահերի պաշտպանության ՀԿ

Աստղացոլք ՀԿ

«Հայաստանի անտառներ» ՀԿ

Լռության ձայն

«Գոյ» բնապահպանա-իրավական հկ

«Յանուս» իրավական հկ

ՏԺԳ հիմնադրամ

«Լիարժեք կյանք» ՀԿ

«Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա» ՀԿ

«ՍԿԱՐՊ »ներառական առողջական կենտրոն ՀԿ

Ընտանիք և համայնք

Հասարակություն առանց բռնության

Աշխատանք և հայրենիք տարածքային զարգացման ՀԿ

Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ

Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն

«Արմավիրի  զարգացման կենտրոն» ՀԿ

Ինֆորմացիայի ազատության կենտրոն

«Հույսի Մեծամոր» ՀԿ

«ՏԱՆԻՔ» ՀԿ

Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ

«Կանանց Ֆորում» ՀԿ

«ԲԼԵՋԱՆ» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ

«Սատար» Հաշմանդամների ՀԿ

«ԱՍՏՂԻԿ» Հաշմանդամ երեխաների Ծնողների Ասոցիացիա"  հկ

ՓՐԿՈՒԹՅՈՒՆ հաշմանդամ երեխաների և երիտասարդների  կենտրոն-ՀԿ

Վորլդ Վիժն Հայաստան

Կանանց իրավունքների կենտրոն ՀԿ

ՓՐԿՈՒԹՅՈՒՆ հաշմանդամ երեխաների և երիտսարդների կենտրոն

Կանանց իրավունքների կենտրոն ՀԿ

ԱԼԻՔ ՄԵԴԻԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Ազգային ջրային համագործակցություն

Խոսքի և մամուլի ազատության քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն

«Գործընկերություն և ուսուցում» ՀԿ

«Համայնքը և երիտասարդները» երիտասարդական, խորհրդատվական ՀԿ

«Շիրակի ուսուցիչների միություն» գիտակրթական կենտրոն ՀԿ

Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոն

Երիտասարդները հանուն Արարատի քաղաքացիական-կրթական ՀԿ

Երեխաների պաշտպանության ցանց